# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նարեկ, 093435745, narek.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 22 Ն

## ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով՝

համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Նարեկ համայնքի 2015թ. տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. << օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ ոչ հիմնական/ շինանարարության թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է.

Հիմնական օբյեկտների համար

ա) մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակություն ունեցող օբյեկտների համար՝ 10000 դրամ:

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար
1. 201 –ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 7500 դրամ:
2. 501 –ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25000 դրամ
3. 1001 –ից ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 35000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

գ) մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ.

դ) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի և շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շին. թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում, կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինականայլ օբյեկտների քանդման թույլտվության համար՝ 5000 դրամ:

Սահմանված դրույքաչափերը հաստատված են 0.5 գործակցի կիրառմամբ:

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է

ա) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքնչյուր եռամսյակի համար ՝ 10000 դրամ:

բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար ՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում ՝վաճառքի կազմաերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար ՝ 10000 դրամ:

5. Համայնքի տարածքում

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանրյուր օրվա համար՝ 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

բ) «Հեղուկ վառելիքի սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների» վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հարյուրհիսուն հազար /150000 / դրամ:

6. Համայնքի տարածում յուրաքանչյուր ամսվա համար այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար տեղական տուրք է սահմանվում 1քմ-1000 դրամ:

7. Անուրդների և մրցույթների մասնակցության վճար սահմանել 1000 դրամ:

8.Համայնքում փաստացի բնակվող յուրաքանչյուր մեկ շնչի համար աղբահանության վճար սահմանել ամսական՝ 100 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍՐՈՅԱՆ ԳՈՌ
2. ԳԵՒՈՐԳՅԱՆ ՊԵՐՃ
3. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՄՈ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐՈԲ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱՐՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նարեկ, 093435745, narek.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 23

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՅՈՒՂ. ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ԵՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

համայնքի ավագանին որոշում է.

Թույլատրել համայնքի ղեկավարին մրցութային կարգով վարձակալության տրամադրել հողատարածքներ, սահմանել մեկնարկային վարձավճար հետևյալ չափով.

1. Համայնքայն սեփականություն համարվող գյուղ. նշանակության հողատարածքներից՝ կոդ – 113 – 8,0 հա., մեկնարկային գինը՝ զուտ եկամտի 421,94 %-ը (1հա.-200000 դր.):
2. Համայնքային սեփականություն համարվող գյուղ. նշանակության հողատարածքներից՝ կոդ- 131, 136, 139, Ընդհանուր չափը՝ 1,945հա., մեկնարկային գինը՝ զուտ եկամտի 316,45 %-ը (1 հա.-150000դր.):
3. Պետական սեփականություն համարվող արոտավայրերից, խոտհարքներից և այլ հողերից՝ 3000,0հա. մեկնարկային գինը՝ զուտ եկամտի 15%-ը (1հա.-1000 դր.):
4. Նարեկ համայնքում անջրդի վարելահողերը վարձակալության տրամադրելու համար վարձավճար սահմանել 1հա-5000 դրամ:
5. Համայնքի սեփականություն համարվող պտղատու այգուց՝ կոդ-0131-0002, 1,2 հա, մեկնարկային գինը՝ զուտ եկամտի 24,1 %-ը (1 հա- 220000):

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄՐՈՅԱՆ ԳՈՌ
2. ԳԵՒՈՐԳՅԱՆ ՊԵՐՃ
3. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՄՈ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐՈԲ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱՐՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նարեկ, 093435745, narek.ararat@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 24

### ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով՝

համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Նարեկ համայնքի գյուղապետարանի և մանկապարտեզի 2014 թվականի գույքագրման արդյունքները և թույլատրել դուրս գրելու ոչ պիտանի գույքը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄՐՈՅԱՆ ԳՈՌ
2. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՊԵՐՃ
3. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՄՈ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐՈԲ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱՌՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նարեկ, 093435745, narek.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 25 Ն

### ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջներով՝

համայնքի ավագանին որոշում է.

Նարեկ համայնքի 2015 թվականի մատուցվող ծառայությունների համար սահմանել վարձավճարներ համայնքի յուրաքանչյուր ընտանիքի համար հետևյալ չափով.

1. Կոյուղու սպասարկում՝ ամսեկան - 500 դրամ

2. Խմելու ջուր՝ 1մ$^3$ - 40 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄՐՈՅԱՆ ԳՈՌ
2. ԳԵՒՈՐԳՅԱՆ ՊԵՐՃ
3. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՄՈ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐՈԲ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍՄԲԱԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱՐՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Նարեկ, 093435745, narek.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 26

## ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ «ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի 04.12.2014թ. NՊL1 01/2813 գրությունը «Համայնքին ջուր մատակարարելու պատրաստակամության մասին» ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի պահանջներով:

Քննարկելով համայնքի խմելու ջրի խնդիրը՝ համայնքի ջրամատակարարման համակարգը «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին անհատույց շահագործման հանձնելու մասին՝

համայնքի ավագանին որոշում է՝

Նարեկ համայնքին մեխանիկական եղանակով ջուր մատակարարելու համար դիմել «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին՝ համայնքի ջրամատակարարման համակարգը անհատույց շահագործման հանձնելու համար:

| Կողմ -1 | Դեմ -4 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|
| 1. ԱՄՐՈՅԱՆ ԳՈՌ | 1. ԳԵՈՐԳՅԱՆ ՊԵՐՃ | |
| | 2. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՄՈ | |
| | 3. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐՈԲ | |
| | 4. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՄԱՐԱՏ | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱՐՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նարեկ, 093435745, narek.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 27Ն

## ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով՝

համայնքի ավագանին որոշում է.

Նարեկ համայնքի 2014թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

"Փողոցների բարելավում" նախագծանախահաշվարկային փաստաթղթերի մշակման համար

Ֆոնդային բյուջեի «Սանիտարական մաքրում» գործ դաս. 05.01.01.51. 5112 հոդվածից 50000 դրամ գումար տեղափոխել "Մայրուղիների և փողոցների վերանորոգում" գործ. դաս. 04.05.01.58 5134 հոդվածին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄՐՈՅԱՆ ԳՈՌ
2. ԳԵՒՈՐԳՅԱՆ ՊԵՐՃ
3. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՍՈ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐՈԲ
5. ԿԱՐԴԱՆՅԱՆ ՍՄԲԱԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱՐՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ